ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

ՀԱՏՎԱԾ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 169[1]. Հաշվապահական հաշվառումը (գրանցումը) խախտումով վարելը, երբ դա կարող է առաջացնել (առաջացրել է) հարկի նվազեցում, կամ հայտարարագիրը, հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը

Հաշվապահական հաշվառումից բացի, օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չվարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի կամ հաշվարկի կամ հաշվետվության (այդ թվում՝ հաշվապահական) կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել (առաջացրել են) հարկի նվազեցում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչև քսանհինգապատիկի չափով:

Բացառությամբ սույն հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված դեպքի, հայտարարագիրը ~~Հայտարարագիրը~~ կամ հաշվարկը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ, բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների, հարկային մարմիններ կամ օրենքով սահմանված դեպքերում տեղական ինքնակառավարման մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

«Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմիններ սահմանված ժամկետում չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝

ա. որևէ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով,

բ. որևէ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ նոտար հանդիսացող (հանդիսացած) ֆիզիկական անձի համար սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկի չափով,

գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, որոնք որևէ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) դրան նախորդող տարվա արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավել համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության բաժնետեր (փայատեր) նվազագույն աշխատավարձի երկու հարյուր հիսունապատիկի չափով,

դ. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու, սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուր հիսունապատիկի չափով,

ե. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք որևէ տարվա ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն, սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուր հիսունապատիկի չափով,

զ. սույն պարբերության «ա», «բ», «գ», «դ» կամ «ե» կետերում չնշված ֆիզիկական անձանց համար սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձը սույն հոդվածի երրորդ պարբերության մեկից ավելի կետերում ներառված լինելու դեպքում, այդ անձի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածի երրորդ պարբերությամբ նախատեսված առավելագույն չափի տուգանքի մեծությունը:»:

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից: